ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա. Օբոսյան
(անուն, ազգանուն)

«30» հունիսի 2023 թ.

N 6-ԿՀ հրաման

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

Հավելված PR-7/ACL-01

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Ն. Աբգարյան
(անվան., ազգանուն, ստորագրություն)

ՍՏՈՒԳԵԼ Է

Հավատարմագրման բաժնի պետ

Ն. Համբարձումյան
(անվան., ազգանուն, ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է

Փորձարկման և տրամաչափարկման լաբորատորիաների խորհրդատվական տեխնիկական կոմիտեի հետ

Գործարկման թվականը 04.07.2023թ.

Բովանդակություն

1 ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ 3

2. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ 3

3. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ 4

4. ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 8

4. ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 10

4.1 ՄԱՍՆԱԳՐԻՆ ԿԱՄ ՍՏԱՆԴԱՐՏԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 10

4.2 ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ 10

4.3 ԿԱՐԾԻՔՆԵՐ և ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ 11

4.4 ՄԻՋԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 12

4.5 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏԸ և ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ 14

4.6 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 14

4.7 ՏԵՂՈՒՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 15

5 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ 20

5.1 ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 20

5.2 ԱՐՏԱՀԵՐԹ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ 21

5.3 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ 21

5.4 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՈՐ ՍՏԱՆԴԱՐՏԻՆ ԱՆՑՈՒՄԸ 21

6 ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ (ՀԵՏԱԳԱ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ) 21

7 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԿՐՃԱՏՈՒՄԸ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ և ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 22

7.1 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ 22

7.2 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ 23

7.3 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ 23

7.4 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 24

7.5 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 24

8. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ և ԳԱՆԳԱՏՆԵՐԸ 24

9. ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ և ԱՐՄՆԱԲ-Ի ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 24

10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ..... ERROR! BOOKMARK NOT DEFINED.

1. *Կիրառման ոլորտը*

Սույն փաստաթուղթը սահմանում է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) կողմից իրականացվող տրամաչափարկման լաբորատորիաների հավատարմագրման, պարբերական/արտահերթ գնահատման, հավատարմագրման ընդլայնման, կրճատման, վերականգնման, կասեցման, դադարեցման, արդիականացման, վերահավատարմագրման ընթացակարգը և կանոնները:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է PR-7 հիմնական փաստաթղթի հավելված, որը ներառում է տվյալ տեսակի համապատասխանության գնահատման մարմնի հավատարմագրման այն պահանջներն ու ընթացակարգը, որոնք սահմանված չեն PR-7-ով:

2. *Նորմատիվ վկայակոչումները*

Առանց տարեթվի վկայակոչված փաստաթղթերը կիրառելի են միայն վերջին հրատարակությամբ: Սույն փաստաթղթում վկայակոչված են հետևյալ փաստաթղթերը՝

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 Փորձարկման և տրամաչափարկման լաբորատորիաների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,

ՀՍՏ 8.11 Չափումների միասնականության ապահովման ազգային համակարգ. Չափագիտություն. Տերմիններ և սահմանումներ,

JCGM 200 Չափագիտության միջազգային բառարան – Հիմնական և ընդհանուր հասկացություններ և համապատասխան տերմիններ (VIM)

PR-7 Հավատարմագրման ընթացակարգը,

PL-05 Որակավորման ստուգմանը (PT), միջլաբորատոր համեմատություններին մասնակցելու վերաբերյալ քաղաքականություն,

PL-06 Չափագիտական հետևելիության վերաբերյալ քաղաքականություն,

EA-4/02 Տրամաչափարկման մեջ չափման անորոշությունների արտահայտումը,

EA-4/21 Լաբորատորիայի հավատարմագրման գործընթացի շրջանակում փոքր միջլաբորատոր համեմատությունների համապատասխանության գնահատման ուղեցույց,

EA-4/23 INF Կարծիքների և մեկնաբանությունների գնահատումը և հավատարմագրումը՝ կիրառելով ԻՍՕ/ԻԷԿ 17025:2017

ILAC-G8 Պահանջներին համապատասխանության վերաբերյալ հաշվետվության կազմման ուղեցույց

ILAC-G24 Չափման միջոցների տրամաչափարկման հաճախականության որոշման ուղեցույց,

ILAC-P9 ILAC-ի քաղաքականությունը որակավորման ստուգման գործընթացին մասնակցության վերաբերյալ,

ILAC-P10 ILAC-ի քաղաքականությունը չափման արդյունքների հետևելիության վերաբերյալ,

ILAC-P14 ILAC-ի քաղաքականությունը տրամաչափարկման անորոշությունների վերաբերյալ,

AC-4.6 Հավատարմագրման ընդհանուր չափանիշները և փաստաթղթերի ցանկը,

«Հավատարմագրման ազգային մարմնի պատկերանիշի և հավատարմագրման նշանի կիրառման կարգ» հավատարմագրման խորհրդի 2012 թ.-ի նոյեմբերի 23-ի N 2 որոշում

EA-ի և ILAC-ի փաստաթղթերը տեղադրված են հետևյալ կայքերում՝

EA: http://www.european-accreditation.org/, ILAC: http://www.ilac.org:

*3. **Տերմինները և սահմանումները***

3.1 Սույն ընթացակարգում կիրառված են «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025, ՀՍՏ

8.11 ստանդարտներով, JCGM 200 փաստաթղթով, PR-7 ընթացակարգով սահմանված, ինչպես նաև հետևյալ տերմիններն ու սահմանումները՝

Տրամաչափարկում՝ գործողությունների ամբողջություն, որի միջոցով որոշակի պայմաններում որոշվում է տրամաչափարկվող չափման միջոցների չափվող արժեքների բաշխման տիրույթն աշխատանքային չափանմուշների կամ չափանմուշային չափման միջոցների համեմատությամբ.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Տրամաչափարկումը կարող է արտահայտվել հայտարարությամբ, տրամաչափարկման ֆունկցիայի, դիագրամի, կորի կամ աղյուսակի միջոցով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Տրամաչափարկումը չպետք է շփոթել չափման միջոցի կարգաբերման հետ, որը որոշ ոլորտներում հաճախ սխալմամբ կոչվում է «ինքնատրամաչափարկում», ինչպես նաև տրամաչափարկման կարգավիճակի ստուգման (համեմատման) հետ:

Ներքին տրամաչափարկում՝ տրամաչափարկում, որի արդյունքները զգալիորեն ազդում են լաբորատորիայի Տրամաչափարկման և չափման հնարավորությունների (CMC-ի) վրա, սակայն ներառված չէ հավատարմագրման ոլորտում (որպես այդպիսին չի կարող առաջարկվել որպես հավատարմագրված տրամաչափման ծառայություն) և որն իրականացվում է լաբորատորիայի անձնակազմի միջոցով սեփական չափման միջոցների չափագիտական հերևելիությունն ապահովելու նպատակով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ներքին տրամաչափարկումը պետք չէ շփոթել ինքնատրամաչափարկման/ինքնակալիբրավորման հետ, օրինակ գոյություն ունեն անալիտիկ կշեռքներ, որոնք ունեն ներկառուցված տրամաչափարկման բեռ, որի միջոցով ինքնատրամաչափարկվում է՝ սեղմելով համապատասխան CAL կոճակը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ներքին տրամաչափարկում կարող են իրականացվել օրինակ սերտիֆիկացված ստանդարտ նմուշներով (CRM) կամ կշեռքների համար ճշտության դասը ապահովող համապատասխան կշռաքարերով՝ ըստ OILM R 111-1:

Չափանմուշ (**էտալոն**)՝ չափման էտալոն, որը նախատեսված է այլ չափման միջոցների տրամաչափարկման համար տվյալ կազմակերպությունում կամ վայրում տվյալ տեսակի ֆիզիկական մեծության համար (JCGM 200):

Աշխատանքային չափանմուշ (**աշխատանքային էտալոն**)՝ չափանմուշ, որն օգտագործվում է ամենօրյա կիրառվող չափման միջոցների կամ չափիչ համակարգերի տրամաչափարկման կամ ստուգաչափման համար (JCGM 200).

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Աշխատանքային չափանմուշը սովորաբար տրամաչափարկվում է չափանմուշով (էտալոնով):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ստուգաչափման հետ կապված երբեմն օգտագործվում են նաև «ստուգման ստանդարտ» կամ «հսկողության ստանդարտ» տերմինները:

Ստանդարտ նմուշ (reference material RM)՝ մեկ կամ մի քանի վերագրված հատկությունների նկատմամբ բավականաչափ համասեռ և կայուն նյութ, որը հաստատվել է չափման գործընթացում ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ստանդարտ նմուշը ընդհանուր հասկացություն է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Հատկությունները կարող են լինել քանակական կամ որակական, օրինակ, նյութերի կամ միացությունների նույնականացումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Կիրառումը կարող է ներառել չափման համակարգի տրամաչափարկում, չափման ընթացակարգի գնահատում, այլ նյութերին արժեքների վերագրում և որակի հսկողություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. ԻՍՕ/ԻԷԿ Ուղեցույց 99:2007-ն ունի նմանատիպ սահմանում, սակայն սահմանափակում է քանակական արժեքների վրա «չափում» տերմինի տարածումը: Այնուամենայնիվ, ԻՍՕ/ԻԷԿ Ուղեցույց 99:2007-ի Ծանոթություն 3-ում հատուկ ներառված է որակի հատկանիշների վերաբերյալ հասկացությունը, որը կոչվում է «անվանական հատկություններ»:

Սերտիֆիկացված ստանդարտ նմուշ (certified reference material CRM)՝ ստանդարտ նմուշ, որին բնորոշ մեկ կամ մի քանի հատկություն սահմանված է չափագիտորեն հիմնավորված (գործող) ընթացակարգով, որն ուղեկցվում է ՍՆ սերտիֆիկատով, որտեղ տրված է այդ հատկության արժեքը, դրա հետ կապված անորոշությունը և չափագիտական հետևելիության մասին հավաստումը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Արժեք» հասկացությունը ներառում է անվանական հատկություն կամ որակական հատկանիշ, որը բնորոշ է նույնականությանը կամ

հաջորդականությանը: Նման հատկանիշների անորոշությունները կարող են արտահայտվել որպես հավանականություններ կամ վստահության մակարդակներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ստանդարտ նմուշների արտադրության և սերտիֆիկացման չափագիտորեն հիմնավորված ընթացակարգերը սահմանված են, ի թիվս այլոց, ԻՍՕ Ուղեցույց 35-ում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. ԻՍՕ Ուղեցույց 31-ում տրված են Ստանդարտ նմուշստանդարտ նմուշների սերտիֆիկատների բովանդակությանը ներկայացվող պահանջները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. ԻՍՕ/ԻԷԿ Ուղեցույց 99:2007-ն ունի նմանատիպ սահմանում:

Որակավորման ստուգում (PT)՝ միջլաբորատոր համեմատությունների միջոցով մասնակցի գործունեության նկատմամբ նախնական սահմանված չափանիշների գնահատում.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Որակավորման ստուգումները կազմակերվում են PT պրովայդերների միջոցով:

Միջլաբորատոր համեմատություն (ILC)՝ միևնույն կամ մի քանի նմանատիպ օբյեկտների չափման կամ փորձարկման կազմակերպում, կատարում և գնահատում երկու կամ ավելի լաբորատորիաների նախապես որոշված պայմաններին համապատասխան.

Փոքր միջլաբորատոր համեմատություն (S_ILC)՝ միջլաբորատոր համեմատություն, որը կազմակերպվել է յոթ կամ պակաս լաբորատորիաների կողմից/միջև:

Լաբորատորիայի տարածք՝ սենք, որտեղ իրականացվում են լաբորատոր գործունեությունը, ներառյալ տրամաչափման աշխատանքները: Տարածքը կարող է լինել մշտական, ժամանակավոր, շարժական կամ լաբորատորիայի մշտական տարածքից դուրս կամ հայտատուի տարածքում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այն վայրերը, որտեղ իրականացվում են տրամաչափարկման գործողությունները, նշվում են Հավատարմագրման վկայականի հավելվածում (հավատարմագրման ոլորտում):

3.2 Հապավումները

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն,
- ԱՐՄՆԱԲ՝ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ,
- ՀԳՄ՝ համապատասխանության գնահատման մարմին,
- ՀԿ՝ հավատարմագրման կոմիտե,
- EA՝ Հավատարմագրման Եվրոպական համագործակցություն,
- ILAC՝ Լաբորատորիաների միջազգային հավատարմագրման համագործակցություն:

4. Տրամաչափարկման լաբորատորիայի հավատարմագրմանը ներկայացվող պահանջները

Հավատարմագրման ընդհանուր չափանիշները սահմանված են AC-4.6 փաստաթղթում:

ՀԱՄ-ը հավատարմագրում է տրամաչափարկման լաբորատորիան նրա տրամաչափարկման գործունեության համար:

Հավատարմագրման նպատակով հայտ (համաձայն ACL-01-01 հավելվածի) ներկայացրած լաբորատորիան պետք է համապատասխանի սույն փաստաթղթում նշված հավատարմագրման պահանջներին:

Լաբորատորիան պետք է ներկայացնի իր իրազեկության վերաբերյալ օբյեկտիվ ապացույց, որն անհրաժեշտ է իր գործունությունն իրականացնելու համար:

Լաբորատորիայի տարածքը (տե՛ս տերմինը) կարող է լինել սեփական կամ վարձակալած, որն ունի պայմանագիր տարածքի սեփականատիրոջ հետ:

ՀԱՄ-ը չի հավատարմագրում այն ոլորտը, որտեղ անձնակազմը տրամաչափարկումը կատարում է պատվիրատուի տարածքում, օրինակ՝ որոշակի տրամաչափարկման պահանջարկի բացակայության կամ չափման միջոցների անսարքության պատճառով:

Եթե լաբորատորիան մինչև հավատարմագրման հայտի ներկայացնելը չի իրականացրել հավատարմագրման ոլորտում նշված տրամաչափարկում արտաքին

պատվիրատուների համար, ապա ՀԱՄ-ը կարող է ընդունել ներքին տրամաչափարկումը և դրա արդյունքները, որոնք իրականացվել են լաբորատորիայի ներքին պատվիրատուների համար: Գնահատման խմբի անդամները տեղում գնահատման ընթացքում գնահատում են լաբորատորիայի տրամաչափարկման գործընթացի արդյունքները և հավատարմագրման պահանջների կատարումը:

Տրամաչափարկման լաբորատորիան չափման միջոցները տրամաչափարկելու համար կարող է կիրառել ստանդարտ մեթոդներ կամ լաբորատորիայի կողմից մշակված ոչ ստանդարտ մեթոդներ: Ոչ ստանդարտ մեթոդները անհրաժեշտ է վավերացնել (վալիդացնել):

Յուրաքանչյուր տրամաչափարկման ընթացակարգի համար լաբորատորիան պետք է նախապատրաստի չափման անորոշությունների գնահատման մեթոդ՝ ըստ EA-4/02, ILAC-P14 փաստաթղթերի: Տրամաչափարկման լաբորատորիան իր իրազեկությունն ապացուցելու համար պետք է մասնակցի որակավորման ստուգման/միջլաբորատոր համեմատություններին (PT/ILC)՝ համաձայն PL-05, ILAC-P9, EA-4/21 պահանջների:

Եթե տեխնիկական սպասարկման աշխատանքները վստահված են արտաքին անձնակազմին (օրինակ՝ տարածքների մաքրում, որտեղ իրականացվում են հավատարմագրված տրամաչափարկման գործողություններ), անհրաժեշտ է լաբորատորիայի կողմից սահմանվի համապատասխան հրահանգներ արտաքին անձնակազմի համար, ներառյալ՝ որոշակի տարածքների կամ հատուկ սարքերի համար գործառնական ցանկացած սահմանափակում:

Արտաքին ծագման փաստաթղթերի (օրինակ՝ ստանդարտներ, մեթոդներ, օրենքներ, կանոնակարգեր) նոր խմբագրությունների դեպքում, եթե այլ բան նշված չէ, լաբորատորիան պարտավոր է կիրառել արդիականացված մեթոդները՝ նոր տարբերակների թողարկման պահից **երեք ամսվա** ընթացքում:

4. Տրամաչափարկման լաբորատորիայի հավատարմագրմանը ներկայացվող հատուկ պահանջները

4.1 **Մասնագրին կամ ստանդարտին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը**

Եթե տրամաչափարկման արդյունքների հիման վրա տրվում է մասնագրին կամ ստանդարտին համապատասխանության մասին եզրակացություն, ապա լաբորատորիան պետք է փաստաթղթավորի որոշումը ընդունելու կարգը՝ հաշվի առնելով ռիսկի աստիճանը (օրինակ, կեղծ դրական կամ կեղծ բացասական և վիճակագրական վարկածը), կապված որոշումների ընդունման կարգի հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Եթե որոշման ընդունման կարգը սահմանված է հայտատուի կողմից գրավոր կամ նորմատիվ փաստաթղթով, ռիսկի մակարդակի հետագա քննարկում չի պահանջվում:

Համապատասխանության վերաբերյալ հայտարարության օրինակները տրված են ILAC-G8 փաստաթղթում:

Տրամաչափարկման լաբորատորիայի հայտատուի կողմից պահանջվող մասնագրին կամ ստանդարտին համապատասխանության հայտարարությունը պետք է զետեղվի տրամաչափման վկայականի կամ վկայականի անբաժանելի մաս հանդիսացող կից փաստաթղթի վրա: Պետք է հստակ նշվի, թե որ չափման արդյունքներին է վերաբերում համապատասխանության հայտարարությունը, որ մասնագրերով/ստանդարտներով են ստուգվում և կիրառվում որոշման ընդունման կարգը: Այն դեպքում, երբ որոշման ընդունման կարգը սահմանվում է օրենքով, կառավարության որոշումով կամ տեխնիկական ստանդարտով, ապա բավական է նշել դրանց նշագրերը տրամաչափարկման վկայականի վրա:

4.2 **Որոշման ընդունման կարգը**

Որոշման ընդունման կարգի սահմանումը ներկայացված է ստորև.

որոշման ընդունման կարգ (decision rule)՝ կանոն, որը նկարագրում է թե ինչպես է չափումների անորոշությունը հաշվի առնվում նշված պահանջին համապատասխանությունը հավաստելու դեպքում:

Չափման անորոշությունը կարող է հաշվի առնվել ինչպես ուղղակիորեն՝ պաշտպանիչ գոտիների կիրառմամբ և անուղղակիորեն, օրինակ՝ չափման անորոշության առավելագույն սահման սահմանելով: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ILAC G8 փաստաթղթի օրինակները:

4.3 **Կարծիքներ և մեկնաբանություններ ներկայացնելը**

Տրամաչափարկման լաբորատորիան չի կարող դիմել միայն հավատարմագրման կարծիքների և մեկնաբանությունների համար: Հավատարմագրման ոլորտը կազմելիս անհրաժեշտ է առաջնորդվել EA-4/23 փաստաթղթի Բ հավելվածով սահմանված օրինակով:

Կարծիքը և մեկնաբանությունը գործընթացի արդյունք է, որով կարող է ընդլայնվել տրամաչափարկման արդյունքի կիրառելիությունը: Այն ձևակերպվում է տեխնիկապես որակավորված անձի(անձանց) կողմից (տես ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 ստանդարտի 6.2 կետը և EA-4/23-ը) և հետագա եզրակացությունները արվում են հիմնվելով ստացված արդյունքի վրա՝ օգտագործելով մասնագետի գիտելիքները և մասնագիտական դատողությունը այդ տրամաչափարկման ոլորտում: Կատարված կարծիքը և մեկնաբանությունը պետք է լինի տեխնիկապես հիմնավորված և հաստատվեն ապացույցներով (տես ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 ստանդարտի 7.5 կետը):

Եթե կարծիքների և մեկնաբանությունների ձևակերպման ժամանակ օգտագործվում է հայտատուի կողմից տրված տեղեկատվությունը, ապա լաբորատորիան պետք է պահպանի համապատասխան գրառումները և տրամաչափարկման վկայականի (սերտիֆիկատի) մեջ հստակ նշի, որ կարծիքներն ու մեկնաբանությունները հիմնված են հայտատուից ստացված տեղեկատվության վրա:

Կարծիքները և մեկնաբանությունները պետք է լինեն տրամաչափարկման վկայականի (սերտիֆիկատի) անբաժանելի մաս և նշվեն «Կարծիքներ և

մեկնաբանություններ» վերնագրով բաժնում: Նրանք չպետք է զետեղվեն որևէ այլ փաստաթղթում կամ հավելվածում:

Կարծիքները և մեկնաբանությունները պետք է հիմնված լինեն միայն նմուշի տրամաչափարկումից ստացված արդյունքների վրա, սակայն կարող են անհրաժեշտ լինել նաև այլ տեղեկություններ՝ ստացված հաշվարկներից, գրականությունից կամ մատենագիտություններից:

Հնարավոր չէ կարծիքներ և մեկնաբանություններ արտահայտել միայն արտաքին լաբորատորիաներից ստացված արդյունքների միջոցով:

4.4 **Միջլաբորատոր համեմատություններին մասնակցությունը**

Լաբորատորիան պետք է իրականացնի իր կատարած աշխատանքի որակի ընթացաստուգում՝ համեմատելով այլ լաբորատորիայի արդյունքների հետ: Արդյունքների համեմատությունը իրականացվում է որակավորման ստուգմներին (PT) և/կամ միջլաբորատոր համեմատություններին մասնակցությամբ: Որակավորման ստուգմներին (PT) և/կամ միջլաբորատոր համեմատություններին մասնակցության պահանջը և պարբերականությունը սահմանված է ԱՐՄՆԱԲ-ի PL-05 քաղաքականությամբ, որը տեղադրված է www.armnab.am պաշտոնական կայքում:

Հավատարմագրման ցիկլի ընթացքում անհրաժեշտ է մասնակցել PT/ILC-ներին յուրաքանչյուր չափագիտական ոլորտի համար: PT/ILC-ի մասնակցության պլանը կազմվում է հավատարմագրման ցիկլի համար, որպեսզի հնարավոր լինի գնահատել լաբորատորիայի ամբողջ հավատարմագրման ոլորտը և նշված տրամաչափարկման նմուշի չափման ընդգրկույթի համար անորոշությունը:

ԱՐՄՆԱԲ-ն ընդունում է PT/ILC-ներին մասնակցության դրական արդյունքները՝ հաստատելու համար լաբորատորիաների Տրամաչափարկման և չափման հնարավորությունները (CMC, Calibration and Measurement Capabilities):

CMC-ը, որպես կանոն, ընդլայնված անորոշությունն է, որը սահմանվում է նորմալ պայմաններում տրամաչափարկելիս որպես նվազագույն չափման անորոշություն և ծածկում է մոտավորապես 95 %-ը: Տրամաչափարկման նմուշը

կարող է ներառել ելակետային չափանմուշները (էտալոնները), որոնք օգտագործվել են տրված մեծության չափման միավորը որոշելու, իրականացնելու, պահպանելու կամ վերարտադրելու համար և չափման միջոցները, որոնք օգտագործել են մեծությունը չափելու համար:

Չափման արդյունքներ տրամադրող լաբորատորիան, երբ տրամաչափարկման օբյեկտը դա թույլ է տալիս, չպետք է հայտարարի ավելի մեծ անորոշություն, քան հավատարմագրված և/կամ պահանջվող CMC-ները:

PT/ILC-ի արդյունքները համարվում են բավարար, եթե |En| ≤ 1 բոլոր չափման կետերի համար և/կամ |En| > 1, եթե իրականացվել են համապատասխան ուղղիչ գործողություններ:

PT/ILC-ի հաշվետվությունը չպետք է ներառի միայն En արժեքը, այլ նաև անորոշությունների հաշվարկը, որը ստացվել է մասնակցած լաբորատորիաների միջև:

PT/ILC-ի արդյունքները և հաշվետվությունը գնահատվում է գնահատման խմբի կողմից տեղում գնահատման ժամանակ:

Լաբորատորիան կարող է փոքրացնել հավատարմագրման ոլորտում նշված CMC-ն այն պայմանով, որ վերջին PT/ILC-ի արդյունքները հաստատեն դրանց ճշտությունը:

ԱՐՄՆԱԲ-ը, հիմք ընդունելով EA-4/21 INF փաստաթուղթը, ընդունում է մասնակցությունը S_ILCs-ին այն դեպքում, երբ չափագիտական որոշակի ոլորտների համար PT և/կամ ILC կազմակերպիչները հասանելի չեն: Լաբորատորիաները պետք է պահպանեն կատարած վերլուծությունների վերաբերյալ գրառումները՝ ապացուցելու համար PT և/կամ ILC կազմակերպիչների անհասանելիությունը:

Այն դեպքում, երբ տրամաչափարկման լաբորատորիան ստացել է PT/ILC-ի անբավարար արդյունքներ, ապա պետք է իրականացնի ուղղիչ/կանխարգելիչ գործողություններ և դրանց արդյունավետության ստուգում: Հետագա PT/ILC մասնակցության կանոնները նշված են PL-05, ILAC-P9, EA-4/21 -ում և սույն փաստաթղթում:

*4.5 **Հավատարմագրման հայտը և կից փաստաթղթերը***

Տրամաչափարկման լաբորատորիան ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում լրացված հայտը և դրան կից փաստաթղթերը՝ համաձայն ACL-01-01 - ACL-01-09 հավելվածների, որոնց ձևաչափերը տեղադրված են ԱՐՄՆԱԲ-ի պաշտոնական կայքում՝ www.armnab.am:

Հավատարմագրման հայտի և կից փաստաթղթերի ընդունման, լրակազմի ստուգման, ռեսուրսների վերլուծության և հայտի գրանցման ընթացակարգը սահմանված է PR-7-ում, որը տեղադրված է www.armnab.am կայքում:

Այն դեպքում, երբ կազմակերպության տրամաչափարկման լաբորատորիաները գտնվում են տարբեր գործունեության իրականացման վայրերում, ապա կարող են ներկայացնել հավատարմագրման հայտ՝ հետևյալ պայմանով.

- եթե բոլոր տեխնիկական մասնաճյուղերը տրամաչափարկում են միևնույն նմուշը, ապա կազմակերպությունը կարող է ներկայացնել մեկ հավատարմագրման հայտ՝ ընդգրկելով բոլոր տեխնիկական մասնաճյուղերը,
- եթե յուրաքանչյուր տեխնիկական մասնաճյուղ տրամաչափարկում է տարբեր նմուշներ, ապա յուրաքանչյուր մասնաճյուղ կարող է առանձին հավատարմագրման հայտ ներկայացնել:

4.6 ***Փաստաթղթերի փորձաքննությունը***

4.6.1 Տրամաչափարկման լաբորատորիայի կողմից համապատասխան վճարումը կատարելուց և գնահատման խումբը հաստատվելուց հետո սկսվում է հավատարմագրման հայտի և կից փաստաթղթերի փորձաքննությունը՝ համաձայն PR-7-ի:

4.6.2 Լաբորատորիան հավատարմագրելու համար ՀԱՄ-ը պետք է վերլուծի ներդրված կառավարման համակարգի փաստաթղթերը՝ հավատարմագրման պահանջներին համապատասխան: Փաստաթղթերի փորձաքննության հաշվետվության ձևը տրված է ACL-01-DR-ում:

4.6.3 **Ներկայացուցչական նմուշներ ընտրելու չափանիշները**

Գնահատման պլանը/գնահատմնան ծրագիրը նախապատրաստվում է գնահատման խմբի ղեկավարի կողմից՝ տեխնիկական գնահատողների/փորձագետների առաջարկությամբ (գրավոր կամ բանավոր)՝ հաշվի առնելով հավատարմագրման ոլորտում նշված գնահատման գործունեության, այդ գործունեության իրականացման վայրի, հավատարմագրման ոլորտի շրջանակում գնահատվող անձնակազմի հետ կապված ռիսկերը, ինչպես նաև հետևյալ չափանիշները՝

- տրամաչափարկման մեթոդի կիրառման սկզբունքը, բարդությունը,
- նմուշառում իրականացնող փորձարկման լաբորատորիաների դեպքում՝ նմուշառման գործընթացը,
- կարծիքները և մեկնաբանությունները, որոնք կիրառելի են տրամաչափարկման լաբորատորիաների համար՝ համաձայն ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-ի, գնահատվում են առաջին անգամ հավատարմագրման կամ հավատարմագրման ընդլայնման ընթացքում,
- PT, ILC մասնակցության բացասական արդյունքները: Անհրաժեշտ է ներկայացուցչական նմուշն ընտրել այն տեխնիկական ոլորտների համար, որտեղ PT, ILC մասնակցելու հավանականությունը փոքր է կամ բացակայում է,
- տրամաչափարկման լաբորատորիայի գործունեության իրականացման տեղամասերի (մասնաճյուղերի) քանակը, հայտատուի տարածքում տրամաչափարկման իրականացումը,
- նախորդ գնահատումների արդյունքները,
- տրված տրամաչափարկման սերտիֆիկատների քանակը,
- անձնակազմի փոփոխությունը, գանգատները և բողոքները և այլն:

4.7 ***Տեղում գնահատումը***

4.7.1 Գնահատման նպատակն է հավաստել տրամաչափարկման լաբորատորիայի գործունեության համապատասխանությունը սույն ընթացակարգին, ԱՐՄՆԱԲ-ի փաստաթղթերին, EA, ILAC փաստաթղթերին և այլ կիրառելի ընդհանուր ու ոլորտային նորմատիվ, ստանդարտացման փաստաթղթերին, տրամաչափարկման

լաբորատորիայի կառավարման համակարգի փաստաթղթերին (որակի ձեռնարկ, ԿՀ փաստաթղթեր, ընթացակարգեր, հրահանգներ, անձնակազմի որակավորում և այլն):

4.7.2 Տեղում գնահատման ժամանակահատվածը (օր/մարդ) որոշվում է համաձայն կառավարման համակարգով սահմանված ընթացակարգերի քանակի, տրամաչափարկման օբյեկտի, տրամաչափարկման մեթոդների, գնահատման ենթակա վայրերի քանակի, անձնակազմի քանակի և այլ գործոններ, օրինակ՝ փաստաթղթերի փորձաքննության ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունների քանակը և այլն:

4.7.3 Տրամաչափարկման լաբորատորիայի գնահատումն իրականացնելու համար ՀԱՄ-ը կիրառում է հետևյալ մեթոդները՝

- **տեղում գնահատում՝** տրամաչափարկման լաբորատորիայի գլխավոր գրասենյակում և ցանկացած գործող միավորներում կամ մասնաճյուղերում, որտեղ իրականացվում է համապատասխանության գնահատման գործունեությունը: Տեղում գնահատման ընթացքում գնահատվում է կառավարման համակարգը և տրամաչափարկման գործընթացը: Տեղում գնահատման արդյունքում կազմվում է հաշվետվություն՝ համաձայն ACL-01-R և ACL-01-AR հավելվածների,

- **հեռավար գնահատում՝** լաբորատորիայի գնահատում ըստ գործունեության իրականացման կամ վիրտուալ վայրի, էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ:

Հեռավար գնահատումն իրականացվում է բացառիկ դեպքերում, օրինակ՝ անհաղթահարելի ուժի ազդեցությունների (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ), համաճարակային հիվանդությունների, գնահատողի/տեխնիկական փորձագետի տեղում մասնակցության անհնարինության և այլ հիմնավորված դեպքերում:

- **նմուշների տրամաչափարկման գործունեությանը հետևում** (witnessing)՝ ՀԱՄ-ի կողմից հավատարմագրման ոլորտի սահմաններում տրամաչափարկման լաբորատորիայի համապատասխանության գնահատման գործունեությանը հետևում իր սեփական տարածքում և հայտատուի տարածքում,

- **գրառումների (գործի) վերլուծություն՝** գրառումների (գործի) վերլուծություն՝ տրամաչափարկման լաբորատորիայի հաշվետվությունների,

սերտիֆիկատների և համապատասխան փաստաթղթերի (թղթային և/կամ ֆայլային) ստուգում:

Գրառումների (գործի) վերլուծությունը ընտրված ներկայացուցչական նմուշի (սերտիֆիկատներ) գնահատումն է բոլոր տեսանկյուններից,

- **փաստաթղթերի վերլուծություն՝** ՀԳՄ-ի փաստաթղթերի ստուգում:

Փաստաթղթերի վերլուծությունը կիրառվում է ՀԳՄ-ի կառավարման համակարգի տարրերի գործառնության արդյունավետությունը գնահատելու համար,

- **որակավորման ստուգման և այլ միջլաբորատոր համեմատությունների իրականացման վերլուծություն՝** PT պրովայդերի կամ այլ լաբորատորիաների հետ միջլաբորատոր համեմատությունների միջոցով տրամաչափարկման արդյունքների գնահատում,

- **չափման աուդիտներ՝** տրամաչափարկման լաբորատորիայի կողմից իրականացված չափման արդյունքների գնահատում,

- **վալիդացման աուդիտներ՝** լաբորատորիայի կողմից իրականացրած մեթոդների վալիդացման արդյունքների գնահատում,

- **հարցազրույցների վարում՝** լաբորատորիայի աշխատակիցների հետ հարցազրույց:

4.7.4 Տրամաչափարկման լաբորատորիային հավատարմագրելով ՀԱՄ-ը հավաստում է, որ տվյալ լաբորատորիան կատարում է հավատարմագրման պահանջները՝ ներառյալ տրամաչափարկման մեթոդներին ներկայացվող պահանջները, տեխնիկական սարքավորումները, անձնակազմի որակավորումը և ապահովում է չափման արդյունքների հետևելիությունը ազգային և միջազգային ելակետային չափանմուշների (էտալոնների) հետ:

4.7.5 Հավատարմագրման գործընթացի ժամանակ ՀԱՄ-ը գնահատում է լաբորատորիայի կառավարման համակարգը և տեխնիկական գործունեությունը: Կառավարման համակարգի գնահատումը ներառում է տրամաչափարկման լաբորատորիայում ներդրված փաստաթղթերի և համապատասխան գրառումների ուսումնասիրությունը:

4.7.6 Եթե տրամաչափարկման լաբորատորիան հրաժարվում է տրամաչափարկման ընթացակարգերը ներկայացնել ՀԱՄ, ապա տեղում գնահատման ժամանակահատվածը երկարացվում է, որպեսզի գնահատողները/փորձագետները տեղում ուսումնասիրեն այդ փաստաթղթերը:

4.7.7 Տեղում գնահատման ընթացքում իրականացվում է տրամաչափարկողի գործունեության հետևում՝ տրամաչափարկման արդյունքների ճշտությունը, ինչպես նաև անձնակազմի իրազեկությունը ստուգելու համար, որի արդյունքում կազմվում է հաշվետվություն՝ համաձայն ACL-01-CWR հավելվածի և կցվում վերջնական հաշվետվությանը:

Գնահատման ընթացքում գնահատողները/փորձագետները կարող են տրամաչափարկողից պահանջել կրկնել չափումները արդեն իսկ տրամաչափարկված նմուշի վրա (օրինակ, հաճախորդի համար), որպեսզի հնարավոր լինի համեմատել կատարված երկու չափումների արդյունքում ստացված արդյունքները:

4.7.8 Երբ լաբորատորիան կատարում է ներքին տրամաչափարկում, ապա պետք է համապատասխանի PL-06, ILAC-P10 փաստաթղթերով սահմանված պահանջներին: Ներքին տրամաչափարկում իրականացնելու համար լաբորատորիայի իրազեկությունը գնահատում է տեխնիկական գնահատողը/փորձագետը ըստ գործունեության իրականացման վայրի գնահատման ժամանակ: Այդ գնահատումը իրականացվում է առաջին հավատարմագրման կամ առաջին պարբերական գնահատման ժամանակ:

Ներքին տրամաչափարկումներն իրականացվում են.

- համապատասխան կրթությամբ, վերապատրաստված և որակավորված/լիցենզավորված տրամաչափարկման լաբորատորիայի կամ այն կազմակերպության իրավասու անձնակազմի կողմից, որին պատկանում է այդ տրամաչափարկման լաբորատորիան,

- տրամաչափարկման լաբորատորիայի կամ կազմակերպության, որին պատկանում է տրամաչափարկման լաբորատորիան, սարքերով կամ էտալոններով,

որոնք տրամաչափարկված են՝ չափագիտական հետևելիությունն ապահովելու նպատակով,

- տվյալ տեսակի տրամաչափարկումն իրականացնելու համար համապատասխան շրջակա միջավայրում,

- ԱՐՄՆԱԲ-ի կողմից գնահատված տրամաչափարկման ընթացակարգին համապատասխան:

Ներքին տրամաչափարկման արդյունքները պետք է.

• ուղեկցվեն չափման անորոշությամբ,

• արտացոլվեն տրամաչափարկման հաշվետվության մեջ՝ համաձայն ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2019 ստանդարտի 7.8 կետի:

4.7.9 Եթե կազմակերպությունը ներկայացնում է յուրաքանչյուր տեխնիկական ստորաբաժանման/գործունեության իրականացման վայրերի համար առանձին հավատարմագրման հայտ, ապա կարելի է իրականացնել համատեղ (միացյալ) գնահատում: Համատեղ գնահատումն իրականացնում են այն պայմանով, որ կառավարման համակարգի վարչական և որակի մասը սահմանված է կազմակերպության ընդհանուր փաստաթղթերում: Տեխնիկական ստորաբաժանումների տեխնիկական ոլորտները կարող են առանձին նկարագրվել: Գնահատումն իրականացվում է բոլոր տեխնիկական ստորաբաժանումներում:

4.7.10 Գնահատման ընթացքը, ինչպես նաև անհամապատասխանությունների հայտնաբերումն ու դասակարգումը սահմանված է PR-7 ընթացակարգում:

4.8 **Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացումը**

Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման և հավատարմագրման վկայականի ու ոլորտի տրամադրման գործընթացը սահմանված է PR-7 ընթացակարգում:

5 Գնահատումները

5.1 Պարբերական գնահատումը

5.1.1 Պարբերական գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում՝ հաշվի առնելով ներքոհիշյալ պահանջները:

5.1.2 Նախքան պլանավորված պարբերական գնահատումը տրամաչափարկման լաբորատորիան առնվազն 10 աշխատանքային օր առաջ պետք է էլեկտրոնային փոստով ԱՐՄՆԱԲ-ին ուղարկի հետևյալ փաստաթղթերը՝

- փոփոխված փաստաթղթերի ցանկը և փաստաթղթերը (թղթային և էլեկտրոնային տարբերակով),

- տեղեկատվություն հավատարմագրման ոլորտի շրջանակներում կատարված տրամաչափարկումների քանակների և որակավորման ստուգումներին/միջլաբորատոր համեմատություններին (PT/ILC) մասնակցության վերաբերյալ՝ հաշված նախորդ գնահատումից՝ համաձայն Բ հավելածով սահմանված ձևաչափի:

5.1.3 Պարբերական գնահատման ծրագիրը կազմելիս գնահատման խմբի ղեկավարը իրականացնում է ռիսկերի վերլուծություն՝ հաշվի առնելով նախորդ գնահատումների արդյունքները այնպես, որ հավատարմագրման ցիկլի ընթացքում գնահատվեն տրամաչափարկման լաբորատորիայի կառավարման համակարգը և հավատարմագրման ոլորտը:

Ներկայացուցչական նմուշն ընտվում է համաձայն սույն փաստաթղթի 4.6.3 կետի:

***Ծանոթություն** 1. Հավատարմագրման ցիկլում գնահատումները պլանավորելիս ընտրվում են այն անձինք, ովքեր նախորդ գնահատումների ընթացքում չեն գնահատվել գործունեությանը հետևելու տեխնիկայով:*

***Ծանոթություն** 2. Եթե տրամաչափարկման լաբորատորիան իր գործունեությունն իրականացնում է տարբեր հասցեներում (մասնաճյուղերում), ապա պարբերական գնահատումներն իրականացվում են գլխավոր գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում: Հավատարմագրման ցիկլում պետք է գնահատվեն բոլոր մասնաճյուղերը:*

5.1.4 Պարբերական գնահատման ժամանակահատվածը (օր/մարդ) որոշվում է համաձայն կառավարման համակարգով սահմանված ընթացակարգերի քանակի, տրամաչափարկման օբյեկտի, տրամաչափարկման մեթոդների, գնահատման ենթակա վայրերի քանակի, անձնակազմի քանակի և այլ գործոններ, օրինակ՝ նախորդ գնահատումների ժամանակ հայտնաբերված անհամապատասխանություն-ները, ստացված գանգատները, հավատարմագրման ոլորտի ընդլայնումը, կրճատումը, կասեցումը, ՀԳՄ-ի գործունեության վայրի հեռավորությունը և այլն:

5.2 ***Արտահերթ գնահատումները***

Արտահերթ գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում:

5.3 ***Համապատասխան որոշման կայացումը***

Պարբերական/արտահերթ գնահատման արդյունքների հիման վրա ՀԿ-ն ընդունում է հավատարմագրումը պահպանելու, կրճատելու, ընդլայնելու, վերականգնելու, կասեցնելու, դադարեցնելու վերաբերյալ որոշում:

5.4 ***Հավատարմագրման չափանիշների փոփոխությունը, այդ թվում՝ հավատարմագրման նոր ստանդարտին անցումը***

Եթե հավատարմագրման ստանդարտը արդիականացվում կամ փոփոխվում է, ապա տրամաչափարկման լաբորատորիան պարտավոր է ցույցադրել, որ ունի համապատասխան ընթացակարգ և իրազեկություն նոր/փոփոխված ստանդարտով սահմանված գործունեությունն իրականացնելու համար:

Հավատարմագրման չափանիշների փոփոխության հետևանքով գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում:

6 Վերահավատարմագրումը (հետագա հավատարմագրումը)

6.1 Վերահավատարմագրման ընթացակարգը սահմանված է PR-7-ում՝ հաշվի առնելով ներքոհիշյալ պահանջները՝

- վերագնահատման ժամանակահատվածը (օր/մարդ) որոշվում է համաձայն մեթոդի այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են վերագնահատման ենթակա տրամաչափարկման մեթոդների, տրամաչափարկման օբյեկտների

քանակը, գնահատման ենթակա վայրերի քանակը, նախորդ գնահատումների արդյունքները, ստացված գանգատները, ՀԳՄ-ի գործունեության վայրի հեռավորությունը և այլն:

6.2 **Վերահատարմագրման վերաբերյալ որոշման կայացումը**

Վերահավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման և հավատարմագրման վկայականի ու ոլորտի տրամադրման գործընթացը սահմանված է PR-7 ընթացակարգում:

7 Հավատարմագրման ոլորտի ընդլայնումը, արդիականցումը, կրճատումը, հավատարմագրման կասեցումը և դադարեցումը

7.1 Հավատարմագրման ոլորտի ընդլայնումը

7.1.1 Տրամաչափարկման լաբորատորիան հավատարմագրման ոլորտի ընդլայնման նպատակով ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում հավատարմագրման ընդլայնման հայտը և կից փաստաթղթերը, որոնց ձևաչափերը տեղադրված են ԱՐՄՆԱԲ-ի կայքում: Անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի բացակայության կամ թերի լինելու դեպքում ԱՐՄՆԱԲ-ը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

7.1.2 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթացի պլանավորումը և գնահատումը կատարվում է այնպես, ինչպես հավատարմագրման գործընթացը՝ համաձայն PR-7-ի և PR-7.10-7.11-ի:

7.1.3 Տրամաչափարկման լաբորատորիան իրավունք ունի վկայակոչել իր հավատարմագրված լինելը միայն ընդլայնված ոլորտը հավատարմագրելուց հետո:

7.1.4 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթացը կարող է համատեղվել տրամաչափարկման լաբորատորիայի պարբերական գնահատման հետ: Այս դեպքում տրամաչափարկման լաբորատորիան հայտը ներկայացնում է նշված գնահատումից առնվազն 2 ամիս առաջ:

7.1.5 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման վավերականության ժամկետ է սահմանվում տրամաչափարկման լաբորատորիայի հավատարմագրման ժամկետի ավարտը:

7.1.6 Հավատարմագրման կասեցման ժամանակահատվածում կամ հավատարմագրման պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում տրամաչափարկման լաբորատորիան չի կարող ներկայացնել հավատարմագրման ընդլայնման, ինչպես նաև վերահավատարմագրման հայտ:

7.1.7 Հավատարմագրման ընդլայնման դեպքում իրականացվում է հավատարմագրման վկայագրի վերաձևակերպում: Հավատարմագրման վկայագրին կցվում է հավատարմագրման ոլորտի ընդլայնման վերաբերյալ կամ փոփոխված հավատարմագրման ոլորտի հավելվածը անհրաժեշտ է ճշտել, ինչի մասին համապատասխան նշում է կատարվում հավատարմագրված ՀԳՄ-ների ռեեստրում և գրանցամատյանում՝ համաձայն Ա հավելվածի:

7.2 Հավատարմագրման ոլորտի արդիականացումը

7.2.1 Տրամաչափարկման լաբորատորիան հավատարմագրման ոլորտի արդիականացման համար ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում արդիականացման ենթակա հավատարմագրման ոլորտը և կից փաստաթղթերը: Արդիականացման գործընթացի ժամանակ տեղում գնահատում չի իրականացվում: Արդիականացման գործընթացը սահմանված է PR-03 և PR-7 ընթացակարգերում:

7.3 Հավատարմագրման ոլորտի կրճատումը

7.3.1 Հավատարմագրման կրճատումը կատարվում է համաձայն PR-7.10-7.11 և PR-7 ընթացակարգերի՝

- ՀԳՄ-ի դիմումի համաձայն,
- հավատարմագրման կասեցման հիմքերը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում,
- պարբերական/արտահերթ գնահատման, գործունեությանը հետևելու արդյունքում:

7.3.2 Հավատարմագրման կրճատման դեպքում իրականացվում է հավատարմագրման վկայագրի վերաձևակերպում: Հավատարմագրման վկայագրին կցվում է կրճատված հավատարմագրման ոլորտը, ինչի մասին համապատասխան նշում է կատարվում հավատարմագրված ՀԳՄ-ների ռեեստրում և գրանցամատյանում՝ համաձայն Ա հավելվածի:

7.4 Հավատարմագրման կասեցումը, դադարեցումը

7.4.1 Հավատարմագրման կասեցման և դադարեցման հիմքերը ու ընթացակարգը սահմանված է PR-7 ընթացակարգում:

7.5 Հավատարմագրման վերականգնումը

7.5.1 Հավատարմագրման կասեցումից հետո հավատարմագրումը վերականգնվում է արտահերթ կամ պարբերական գնահատման միջոցով՝ իրականացնելով հետևյալ գործընթացներից մեկը կամ մի քանիսը.

- փաստաթղթերի փորձաքննություն,
- տեղում գնահատում,
- գործունեության հետևում:

7.5.2 Հավատարմագրման վերականգման ընթացակարգը սահմանված է PR-7 ընթացակարգում:

8. Բողոքարկումը և գանգատները

Բողոքարկման քննարկման ընթացակարգը սահմանված է K-04 կարգում, իսկ գանգատներինը՝ PR-7.12 ընթացակարգում, որոնք տեղադրված են www.armnab.am կայքում:

9. Տրամաչափարկման լաբորատորիայի և ԱՐՄՆԱԲ-ի պարտավորությունները

9.1 Պարտավորությունները սահմանված են տրամաչափարկման լաբորատորիայի և ԱՐՄՆԱԲ-ի միջև կնքվող Մինչհավատարմագրման,

Հավատարմագրման պայմանագրերում, ինչպես նաև սույն փաստաթղթի 5-րդ բաժնում:

9.2 ԱՐՄՆԱԲ-ի և հավատարմագրված կամ հավատարմագրմանը հավակնող տրամաչափարկման լաբորատորիայի, կամ տրամաչափարկման լաբորատորիայի և հայտատուի միջև հարաբերություններին վերաբերող ողջ տեղեկատվությունը պետք է լինի գաղտնի, ուստի ԱՐՄՆԱԲ-ը տրամաչափարկման լաբորատորիայի վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում երրորդ կողմին, եթե՝

- տեղեկատվության հրապարակումը նախատեսված է հավատարմագրման կամ սերտիֆիկացման ստանդարտներով/կանոններով,
- սահմանված է օրենքով կամ լիազոր մարմինների կողմից,
- հարցումը իր հիմնավորմամբ ԱՐՄՆԱԲ-ին է ուղարկվում ԵԱՏՄ, EA, ILAC հավատարմագրման կազմակերպություններին ստորագրող կողմ հանդիսացող մեկ այլ հավատարմագրման մարմնի կողմից,
- տեղեկատվության տրամադրումն իրականացվում է բոլոր ներգրավված կողմերի բացահայտ և միաձայն համաձայնությամբ: